ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022 թվականի N 04

ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 25.12.2020թ-ի թիվ 103-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սերգեյ Նորիկի Մաթևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրացման 2088644 վկայական) հողամասի՝ ք. Եղեգնաձոր, Նարեկացի 3 հասցեն փոփոխել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Գ.Նարեկացու փողոց, 3/5 առևտրի սրահ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. հունվարի 12
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020 yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվարի 2022 թվականի N 05

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ և 8-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լուկաշեն Համբարձումի Սարգսյանին, Էմմա Համազասպի Քոչարյանին, Շամամ և Կարինե Լուկաշենի Սարգսյաններին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01122021-10-0002 վկայական), 0.071 հա մակերեսով, 10-015-0161-0015 կադաստրային ծածկագրով, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող հողատարածքի գործառնական նշանակությունը փոփոխել՝ դարձնելով պտղատու այգի՝ խաղող:

2. Որոշման օրինակը հինգ օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի վկայականում համապատասխան ուղղում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձանց առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

2022թ. հունվարի 12
ք.Եղեգնաձոր